Արձանագրություն N 2
«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/4Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» փետրվարի 2019թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Պապյանը, Լ. Հարությունյանը, Լ.Ոսկանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Ն. Մեսրոպյանը

Ի. գնանշման հարցում ընթացակարգի հայտերի բացման մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	<<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ	Ե, Չարենցի, Փ 2 Էլ. փոստ. info@seimshin.am

բ/ մասնակցի կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով ներկայացված է կից աղյուսակով:
գ/ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

2. գնանշման հարցում ընթացակարգի հայտերի գնահատման և բանակցությունների հրավիրելու մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի միակ մասնակցի՝ <<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի կողմից հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին գնահատել անբավարար: Մասնավորապես
- <<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ն ներկայացրել է 04.02.2019թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի «Լիցենզավորման կենտրոն» գործակալության կողմից տրված գրությունը, որի համաձայն կազմակերպության կողմից ներկայացված լիցենզավորման հայտը քննարկվել է ՀՀ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորող հանձնաժողովի 2019թ. փետրվարի 1-ի նիստի ժամանակ և տրվել են դրական եզրակացություն: Լիցենզիաների ներդիրները կարող են ստանալ «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունից:

Scanned by CamScanner

2. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 06.02.2019թ. թիվ 05/15.3/1394-19 գրությամբ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ուղղված հարցումը <<ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի լիցենզիաների շրջանակներում գործունեություն ծավալելու մասին, որոշեց սպասել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատասխանին:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- հիմք ընդունելով հրավերի 7.6 կետը՝ մասնակցին հրավիրել բանակցությունների,
- բանակցությունների վարման համար հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. փետրվարի 15-ին ժամը 15:30-ին ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Պապյան

_____ Լ. Հարությունյան

_____ Լ. Ոսկանյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner